

**ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻՆԱՅԷԹԻ
ՈՐՈՇ ԿԱԶԱՆԵՐԻ
ՀԱՅ ԲՆԱԿԶՈՒԹԵԱՆ
ԹՈՒԱՔԱՆԱԿԻ ՃՇԴՈՒՄՆ ԸՍՏ
ԱՐԵԻԵԼԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԱՊԱՍՏԱՆԱԾ
ԱՐԵԻՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
1914-15ԻՆ ԿԱԶՄՈՒԱԾ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ
ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼԵԱՆ**

Ինչպէս յայտնի է, 1914ի Հոկտեմբերի կէսերին¹ կովկասեան ռազմաճակատում մարտական գործողութիւնների սկսումով, ռուսական զօրքերը ժամանակաւորապէս գրաւեցին Օսմանեան կայսրութեան մէջ գտնուող Արեւմտեան Հայաստանի սահմանամերձ առանձին տարածքներ, այդ թւում՝ Էրզրումի վիլայէթի Բասէն կազայի զգալի մասը, ուր Հոկտեմբերի վերջին դուրս եկան Քէօփրիքէօյ աւանի շրջանը: Սակայն Հոկտեմբերի 25-26ին ծաւալուած ոչ-յաջող մարտերից յետոյ ռուսները կարճ ժամանակամիջոցում նահանջեցին, ինչը հարկադրեց տեղի հայ բնակչութեանը տեղահանուել²: Այսպէս սկիզբ առաւ արեւմտահայերի հերթական գաղթը, որը մի փոքր աւելի ուշ՝ Դեկտեմբերին, Սարիղամիշի նշանաւոր ճակատամարտի օրերին, ընդգրկեց աւելի մեծ տարածք՝ նոյն վիլայէթի Բայազէտի ընդարձակ սանջակը գրեթէ ամբողջութեամբ³: 1915ի Յուլիսի վերջին հայաթափուեց նաեւ Վանի վիլայէթը:

Տեղահանուած հայութիւնը (նաեւ՝ հազարաւոր ասորիներ, յոյներ եւ ուրիշներ) գերազանցապէս ապաստան գտաւ Ռուսական կայսրութեան անդրկովկասեան Երեւանի, Թիֆլիսի, Ելիզաւետպոլի նահանգների եւ Կարսի մարզի հայաբնակ գաւառներում, Բաքու քաղաքում, իսկ 1915ի ամռանից՝ նաեւ ռուսական զօրքերի կողմից ռազմակալուած Պարսկաստանի առանձին շրջաններում (Սալմաստ, Ուրմիա, Խոյ, Մակու եւլն):

Նշուած վայրերում, 1914-17ին պարբերաբար անց են կացուել գաղթականների հաշուառումներ եւ վիճակագրութիւններ, ընդ որում, ինչպէս իշխանութիւնների, այնպէս էլ հայկական մի շարք կազմակերպութիւնների (մասնաւորապէս՝ Կովկասեան Բարեգործական Ընկերութեանը կից Հայկական Կենտրոնական Կոմիտէի), անգամ՝ անհատ անձանց կողմից: Տուեալները մասամբ՝ հրատարակուել են (թէ՛ առանձին գրքոյկներով, թէ՛ մամուլում), իսկ մի մասն առ այսօր դեռ մնում է անտիպ: Այս նիւթերը խիստ ուշագրաւ են եւ արժէքաւոր: Յատկապէս կ'առանձնացնէինք Կովկասի փոխարքայութեան հրահանգով 1915ի Յունուարի 30ին Երեւանի նահանգում եւ 1916ի Յունուարի 14ին ողջ Անդրկովկասում անցկացուած միօրեայ վիճակագրութիւնները⁴, որտեղ գրանցուած ժողովրդագրական տուեալներն արտացոլում են ոչ միայն ներկայ պահի, այլեւ՝ մինչեւ գաղթը եղած իրավիճակը: Այս հանգամանքը յատկապէս մեծ կարեւորութիւն ունի, քանի որ, ինչպէս ցոյց է տուել ուսումնասիրութիւնը, զգալիօրէն օգնում է բաւական մեծ ճշգրտութեամբ որոշել առաջին աշխարհամարտի նախօրեակին Արեւմտեան Հայաստանի մի ամբողջ շարք գաւառների հայ բնակչութեան թուաքանակը: Մի հարց, որն առ այսօր չի կորցրել իր քաղաքական հնչողութիւնը ինչպէս հայ, այնպէս էլ արդի թուրքական պատմագրութեան եւ քաղաքական որոշակի շրջանակների համար: Բաւական է յիշել վերջին տասնամեակներում թրքանպաստ բազմաթիւ յօդուածների եւ մենագրութիւնների հրատարակումը (յատկապէս՝ Քեմալ Քարիաթի եւ Ջաստին Մըքթարթիի աշխատութիւնները)⁵, որոնցում, կրկին շրջանառութեան մեջ դնելով օսմանեան վիճակագրութիւնները, դարձեալ փորձեր են արւում Արեւմտեան Հայաստանում հայերը ներկայացնել իբրեւ փոքրամասնութիւն: Գաղթականներին վերաբերող վիճակագրական տուեալների օգնութեամբ որոշ գաւառների հայութեան թուաքանակի ճշգրտումը հնարաւորութիւն է ընձեռում մշակելու որոշակի սկզբունքներ, որոնք կիրառելի են ամբողջ Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի համար, ինչը, մեր խորին համոզմամբ, մէկընդմիջտ եւ վերջնականօրէն ցոյց է տալիս օսմանեան պաշտօնական վիճակագրութեան հաւաստիութեան աստիճանն ու մասնագիտական մակարդակը: Բացի այդ, այս տեսանկիւնից հարցի քննութիւնն օգնում է աւելի իրատեսական մօտեցում ձեւաւորել նաեւ 1912-14ին անցկացուած հայկական վիճակագրութեան նկատմամբ, ցոյց տալ վերջինիս իրական տեղը եւ նշանակութիւնը՝ քննարկուող ինդրի համար:

Ուշագրաւ է, որ նման մօտեցում առաջին անգամ կիրառել են հենց ժամանակակիցները: Մասնաւորապէս կարելի է առանձնացնել 1914ի Նոյեմբերի վերջին Հորդոն պարբերականում լոյս տեսած «Բասէն գաւառի 11 հայ գիւղերի ազգաբնակչութիւնը» յօդուածը⁶: Ընդ որում,

Հայկական Կենտրոնական Կոմիտէի լիազօր Աղ. Շարաֆեանի կողմից տրամադրուած նիւթերը համեմատուում են արեւելահայ պատմաբան եւ տնտեսագէտ-վիճակագիր Ա-Դոյի (Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան, 1867-1954) այն ժամանակ Արեւմտեան Հայաստանի ժողովրդագրութեանը նուիրուած առաջին նշանակալից եւ համապարփակ Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները⁷ աշխատութեան տուեալների հետ տուեալներ, որոնք հեղինակը հաւաքել է 1909ին նշուած վարչամիաւորների տարածքում կատարած եռամսեայ ճանապարհորդութեան ընթացքում, եւ որոնք ժամանակային առումով ունեն տարբեր ընդգրկում (սկսած 1890ականներից մինչեւ 1908-09): Յետագայում սակայն, այս տեսանկիւնից հարցը քննելու լուրջ եւ համակարգուած փորձեր, ըստ հուլիան չեն արուել:

Ինչպէս վերը նշեցինք, Կովկասեան ռազմաճակատում մարտական գործողութիւնների առաջին թատերաբեմերից մէկը դարձաւ Բասէնը, որն օսմանեան վարչական բաժանումով Էրզրումի սանջակի կազաներից էր եւ տարածուում էր մինչեւ այն ժամանակուայ ռուս-թուրքական սահմանը: Առաջին բասենցի գաղթականները Կարսի մարզում յայտնուեցին 1914ի Հոկտեմբերի վերջին՝ Քէօփրիքէօյից ռուսական զօրքերի ժամանակաւոր նահանջից յետոյ: Դեկտեմբերին, թուրքական բանակի հակայարձակման հետեւանքով, գաղթականները ստիպուած էին տեղափոխուել Երեւանի նահանգի տարածք, ուր եւ հաշուառուեցին 1915ի Յունուարի 30ի միօրեայ վիճակագրութեան ընթացքում՝ այդ նպատակով ստեղծուած երեւանեան վիճակագրական յանձնաժողովի աշխատակիցների կողմից (ի դէպ, նշուած յանձնաժողովի նախագահն էր Ա-Դօն): Շուրջ երեք տասնեակ գիւղերից⁸ դուրս եկած բասենցի հայերի թիւը կազմում էր 12890 անձ (1545 տուն)⁹: Ընդ որում, գաղթի ընթացքում նրանք տուել էին զգալի կորուստներ՝ 692 հոգի (դրանք ճանապարհին զոհուած, մահացած կամ անհետ կորած, ինչպէս նաեւ հայրենիքում մնացած բնակիչներն էին, որոնց ճակատագիրն անյայտ էր)¹⁰: Փաստօրէն, 1914ի Հոկտեմբերի վիճակով հաշուառուած 1545 տներն ունեցել են շուրջ 13600 բնակիչ:

Սակայն, մեզ հասու այլ տուեալներ ցոյց են տալիս որ 30 Յունուար 1915ի միօրեայ վիճակագրութիւնն ամբողջովին չի արտացոլում Արեւելեան Հայաստան տեղափոխուած բասենցի (եւ ընդհանրապէս՝ արեւմտահայ) գաղթականների թիւը: Յայտնի է, որ բասենցիները գրանցուել են միջանի անգամ, եւ 1914ի Նոյեմբեր-Դեկտեմբերի հաշուառումը պարզում է որ որոշակի թուով տներ դուրս են մնացել քննարկուող վիճակագրութիւնից: Այսպէս, եթէ 1914ի նշուած ամիսներին Եաղան գիւղից Արեւելեան Հայաստան էր անցել 190-195 տուն, ապա 30 Յունուար 1915ին գրանցուել էր միայն 174ը (տարբերութիւնը շուրջ 20

տուն կամ 10.2%): Նոյն ձևով, Իշխուհի 1914ի Նոյեմբերին գրանցուած 132 տներից տեղ էին գտել 120ը (տարբերութիւն՝ 12 տուն կամ 9.1%), Իւզվերանի 130 տներից՝ 89ը (տարբերութիւն՝ 41 տ. կամ 31.5%) եւլն.¹¹: Մեր հաշուարկներով, միօրեայ վիճակագրութեան ընթացքում հաշուառումից դուրս մնացած բասենցի հայերի թիւը կազմել է աւելի քան 110 տուն (ընտանիք) կամ շուրջ 1000 անձ¹²: Հետեւաբար, նշուած գիւղերում, ոչ լրիւ տուեալներով, մինչեւ գաղթն ապրել են շուրջ 14800 հայեր: Յայտնի է նաեւ, որ ընդհանուր առմամբ Բասէնից Արեւելեան Հայաստան էին անցել աւելի քան 15500 մարդ (առանց կորստի հաշուարկի)¹³: Սակայն չմոռանանք, որ տուեալ դէպքում խօսք է գնում Բասէնի կազայի միայն արեւելեան հատուածից դուրս եկածների մասին (այն էլ՝ ոչ բոլոր): Իրականում, Քէօփրիքէօյ աւանից արեւմուտք ընկած չըջանի, այդ թւում՝ Բասէնի վարչական կենտրոն Հասան-կալէի հայերը չհասցրեցին հեռանալ (միօրեայ վիճակագրութիւնը գրանցել է այստեղից դուրս եկած միայն 18 տուն՝ 97 անձով, առանց կորստի, որը կազմում էր 23 մարդ)¹⁴, ինչը տեղի գաղթականների ընդհանուր թուի 0.8% է միայն: Մինչդեռ մեզ հասած Կարնոյ (Էրզրումի) հայոց առաջնորդարանի դարասկզբի վիճակագրութեան համաձայն, որի մասին խօսք կը լինի ստորեւ, Բասէնի արեւմտեան մասի միայն 9 բնակավայրերում, այդ թւում՝ Հասան-կալէում, ապրել են 3400ից աւելի հայեր¹⁵: Ուստի վերոբերեալ 15500ը դեռ շատ հեռու է գաւառի հայ բնակչութեան իրական թուից: Սակայն նոյնիսկ երբ այն համեմատում ենք 1912ի (հիշրայի 1330) օսմանեան այսպէս կոչուած «Համընդհանուր մարդահամարի» (nüfus-i umumi) հետ, ուր Բասէնի ողջ հայ բնակչութիւնը ցոյց է տրուած 10000ից մի փոքր աւելի¹⁶, ապա ահնայատ է դառնում պաշտօնական վիճակագրութեան, մեղմ ասած անկատարութիւնն ու անլիարժէքութիւնը (չմոռանանք նշել, որ նշուած վիճակագրութեան տուեալներն ընկած են արդէն յիշատակուած Մըքթարթիի եւ Քարփաթի ուսումնասիրութիւնների հիմքում):

Եւ այնուամենայնիւ, ի՞նչպէս ճշդել Բասէնի գաւառի ամբողջ հայ բնակչութեան թիւը: Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ դա հնարաւոր է անել յատկապէս գաղթականների եւ Կարնոյ առաջնորդարանի վերը արդէն յիշատակուած վիճակագրութիւնների տուեալների համադրական համեմատութեամբ: Առաջնորդարանի տուեալներով, Բասենում հայերի թիւը կազմել է 16740 մարդ (1772 տուն)¹⁷: Բարեբախտաբար, այս վիճակագրութիւնը պահպանուել է նաեւ ուշագրաւ մանրամասնութիւններով՝ Ֆրանսահայ Ռեմոն-Յարութիւն Գէորգեանի եւ Պոլ Փարուջեանի կողմից 1992ին Փարիզում լոյս ընծայուած արժէքաւոր աշխատութեան¹⁸ շնորհիւ, որն էլ հնարաւորութիւն է ընձեռում աւելի հիմնաւոր կերպով քննութեան առնել այն: Ամէնից առաջ աչքի է

զարնում մի ուշագրաւ փաստ: Ա-Ռոյի աշխատութեան եւ առաջնորդարանի ցուցակներում Բասէնին վերաբերող տուեալների համադրումն ի յայտ է բերում արտակարգ նմանութիւն: Երկու ղէպքում էլ նոյնն են ինչպէս հայերի տների թիւը՝ 1772 (այդ թւում՝ նաեւ ըստ առանձին բնակավայրերի), այնպէս էլ հայաբնակ գիւղերի քանակը՝ 57¹⁹: Եզրակացութիւնը կարող է լինել մէկը՝ Կարնոյ առաջնորդարանի վերոյիշեալ 16740 թիւը (ի դէպ, առաջին անգամ այն շրջանառութեան մէջ է դրել հայ հոգեւորական Ռ. Բեկգուլեանցն իր ուշագրաւ գրքում) արտացոլում է ո՛չ թէ առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակի, այլ աւելի վաղ ժամանակաշրջանի ժողովրդագրական կացութիւնը: Պայմանականօրէն այն կարելի է ընդունել 1909 թուականը, այսինքն այն ժամանակը, երբ Ա-Ռօն կատարել է իր եռամսեայ ճանապարհորդութիւնը: Ըստ երեւոյթին, ժամանակի սղութեան եւ նոր տուեալների պակասի հետեւանքով, Կարնոյ առաջնորդարանը ստիպւած դիմել է միջանի տարուայ վաղեմութիւն ունեցող արդէն պատրաստի ցուցակի օգնութեանը, մանաւանդ եթէ նկատի ունենանք այն հանգամանքը, որ 1912-13ին հայկական բարենորոգումների միջազգային ատեաններում կրկին ընթացող քննարկումները հրատապ էին դարձրել քիչ թէ շատ ճշգրիտ վիճակագրութեամբ պարզել Արեւմտեան Հայաստանի ժողովրդագրական իրավիճակը:

Այս ամէնով հանդերձ, Կարնոյ առաջնորդարանի տուեալները (իհարկէ որոշ վերապահումով), մենք ընդունում ենք ելակէտային եւ կրկին դիմում 30 Յունուար 1915ի գաղթականների միօրեայ հաշուումանը: Մենք առանձնացրել ենք Բասէնի այն 15 բնակավայրերը, որոնց բնակչութիւնը գրեթէ ամբողջութեամբ էր գաղթել (տես նաեւ՝ «Յաւելուած Ա.»)²⁰: Յունուարի 30ին Երեւանի նահանգում գրանցուել էին դրանց 1476 տների աւելի քան 12400 բնակիչներ: Ընդ որում, նախքան գաղթն առկայ վիճակը պարզելու համար անպայմանօրէն հաշուել ենք առել նրանց տուած կորուստը՝ մօտ 1400 մարդ, որից 640ից աւելի՝ սպանուածներ եւ մահացածներ, իսկ մօտ 700ը՝ յունուարեան վիճակագրութեան ընթացքում ինչ-ինչ պատճառներով հաշուառումից դուրս մնացածներ: Ըստ այդմ, 1914ի աշնանն առանձնացուած 15 գիւղերում ապրել են շուրջ 13800 հայեր: Առաջնորդարանի տուեալներով այս գիւղերն ունէին 11000 հայ բնակիչ: Ինչպէս տեսնում ենք, առկայ է զգալի աճ՝ 2800 անձ կամ 25.5%: Այս երեւոյթն, ի միջի այլոց, շատ յատուկ էր 1908-1914 ժամանակահատուածի Արեւմտեան Հայաստանի համար: Հետեւաբար, վերջին տոկոսային ցուցանիշը տարածելով ողջ կազմի վրայ, կը ստանանք, որ Բասէնում 1914ին հայերի իրական թիւը եղել է շուրջ 21000 մարդ:

Գաղթականների երկրորդ խոշոր ալիքը դուրս եկաւ Էրզրումի վիլայէթի Բայազէտի սանջակից, որը տարածքով շուրջ երկու անգամ գերազանցում էր Բասէնին: Որոշ տուեալներով, գաղթը սկսուեց 1914ի Դեկտեմբերի 18-19ին (ըստ Ա-Դոյի՝ Դեկտեմբերի 18ին), եւ արդէն Դեկտեմբերի 23ին ուս-թուրքական պետական սահմանը հատեցին փախստականների առաջին խմբերը: Սանջակը գրաւում էր Էրզրումի վիլայէթի հարաւ-արեւելեան ընդարձակ հատուածը, վարչականօրէն բաժանուելով 5 կազայի՝ Բայազէտի, Դիհաղինի, Կարաքիլիսէի, Ալաշկերտի եւ Անիթարի (Դուլթաղի): Գաղթն ամբողջովին ընդգրկեց դրանցից առաջին չորսի տարածքը: Վերջին՝ հինգերորդը՝ Անիթաբը, ամէնահեռաւորն էր (գտնուում էր սանջակի ծայր հարաւ-արեւմտեան մասում՝ սահմանակցելով Բիթլիսի վիլայէթին), եւ տեղի հայերի միայն փոքր մասը հասցրեց հեռանալ Արեւելեան Հայաստան:

Համաձայն 1914ի վերջին անցկացուած Բայազէտի սանջակից դուրս եկած փախստականների հաշուառման, վերջիններիս թիւը կազմում էր 23760 մարդ (3245 տուն): Ընդ որում, ի տարբերութիւն բասենցի իրենց հայրենակիցների, տեղի հայերը կրել էին աւելի նշանակալից կորուստներ՝ մօտաւորապէս 2280 զոհուած, անհետ կորած, մահացած: Մեծ էր նաեւ առեւանգուած կանանց եւ աղջիկների թիւը²¹: Փաստօրէն, մինչեւ գաղթը վերոյիշյալ 3245 տներն ունեցել են շուրջ 26040 բնակիչ:

Մեր կողմից արդէն յիշատակուած 1912ի օսմանեան վիճակագրութիւնը Բայազէտի սանջակի ամբողջ հայ բնակչութեան թիւը ցոյց է տալիս ընդամէնը 13412 մարդ²²: Այս թուերի արդէն իսկ պարզ համարումը դոյզն ինչ կասկած չի թողնում, որ պաշտօնական տուեալները լիարժէք չեն, հետեւաբար՝ որեւէ վիճակագրական հաշուարկի համար ընդունելի չեն կարող համարուել: Այս առումով իրականութեանն աւելի մօտ են մեզ հասու հայկական աղբիւրները: Նախ, Կարնոյ առաջնորդարանի վիճակագրութեան համաձայն, սանջակի ամբողջ տարածքում հայերի թիւը եղել է 25211 մարդ (սխալ հաշուարկով՝ 26251 մարդ)²³: Բացի այդ, յայտնի է Մշոյ առաջնորդարանի նախկին քարտուղար Ն. Մարտիրոսեանի Բայազէտի սանջակի հայերի մանրամասն վիճակագրութիւնը, որի համաձայն նրանց թիւը կազմում էր շուրջ 27400 մարդ (27393)²⁴: Ինչպէս տեսնում ենք, հայկական աղբիւրները բերում են տեղի փախստականների 1914ի վերջին կազմուած վիճակագրութեանը խիստ մօտ տուեալներ, ինչն արդէն իսկ խօսում է դրանց աւելի բարձր հաւաստիութեան մասին:

Սակայն փորձենք նաեւ ինքներս ճշդել Բայազէտի սանջակի հայերի թիւը նշուած ժամանակամիջոցում: Ընդ որում, հետեւելով արեւմտահայ գաղթականների հաշուառման հեղինակներին, նպատակա-

յարմար ենք գտել Ալաշկերտ, Կարաբերդիսէ, Դիաղին եւ Անթաբ (Դու-
թաղ) կազաները միաւորել մէկ խմբում՝ առանձնացնելով Բայազէտը:
Առաջին չորս կազաներից տեղափոխուած հայերի թիւը, ըստ արդէն
յայտնի հաշուառման, կազմել է 20120 մարդ (2725 տուն), իսկ կրած
կորուստը՝ 2115 մարդ²⁵: Այսինքն գրանցուած 2725 տունը մինչեւ
գաղթն ունէր 22235 հայ բնակիչ:

Սակայն փաստերը ցոյց են տալիս, որ նշուած գաւառից գաղթել
էին ոչ բոլոր հայերը:

ա. Դիաղինի Զուջան գիւղի բնակչութիւնը մեծմասամբ (մեր հաշ-
ւարկներով՝ շուրջ 380 մարդ²⁶) մնացել էր տեղում²⁷:

բ. Յայտնի է, որ Ալաշկերտի արեւմտեան, հայկական ամէնահեռա-
ւոր Զէտկան եւ Մօլլա-սուլէյման գիւղերի բնակչութեան զգալի մասը՝
ուշ տեղեկանալով համընդհանուր գաղթի մասին, չհասցրեց հեռանալ
եւ ենթարկուեց քրդերի յարձակումներին եւ վայրագ կոտորածին: Մի-
օրեայ վիճակագրութեամբ Երեւանի նահանգում գրանցուել էր Զէտ-
կանից՝ 53 տուն (500 անձ + կորուստ՝ 114 մարդ = 614 մարդ մինչեւ
գաղթը), իսկ Մօլլա-սուլէյմանից՝ 63 տուն (660 անձ + կորուստը՝ 105
մարդ = 765 մարդ մինչեւ գաղթը)²⁸: Սակայն ձեռքի տակ եղած լրացու-
ցիչ փաստերը ցոյց են տալիս, որ նշուած բնակավայրերը շատ աւելի
բազմամարդ էին: Այսպէս, ըստ Ալեքսանդր Շիրվանզադէի (որն ան-
ձամբ եղել է գիւղում) եւ Ա-Դոյի տուեալների, Զէտկանը 1914ի Նոյեմ-
բերին (մինչեւ գաղթը) ունէր շուրջ 90 տուն հայ բնակիչ²⁹: Նկատի ու-
նենալով այս գիւղի փախստականների տան մեծութեան միջին
գործակիցը՝ 11600 (հաշուի ենք առել նաեւ կորուստը, ըստ միօրեայ
վիճակագրութեան տուեալների), գիւղում եղել է առնուազն 1000 հայ
բնակիչ: Ինչ վերաբերում է Մօլլա-սուլէյմանին, ապա ըստ Կարնոյ ա-
ռաջնորդարանի, այն ունէր 1252 հայ բնակիչ (161 տուն), իսկ ըստ
Մարտիրոսեանի՝ 1700 հայ բնակիչ (178 տուն)³⁰: Միջին հաշուարկով,
գիւղում, ըստ հոլթեան, մինչեւ գաղթը, բնակուել է 1500 հայ: Այսպի-
սով, 1915 Յունուարի 1ին նշուած գիւղերից գրանցուել էին մինչեւ
գաղթը եւ կոտորածը Զէտկանում ապրող հայ բնակիչների 50%օր (կո-
րստի հետ՝ 61%օր) եւ Մօլլա-սուլէյմանի 44%օր (կորստի հետ՝ 51%օր):
Ըստ այդմ, այս բնակավայրերից Արեւելեան Հայաստան չէր անցել
առնուազն 1340 մարդ, որից շուրջ 220ը՝ միօրեայ վիճակագրութեան
ընթացքում Երեւանի նահանգում գրանցուած 116 տների զոհերն են:
Հետեւաբար, հաշուառման եւ ո՛չ մի ցուցակում չեն գրանցուել շուրջ
1120 հայեր: Ի դէպ, Ալաշկերտի առանձին գիւղերի (Ամատ, Աշխալի,
Խաստուր, Թոփրաղ-կալէ գիւղաքաղաք եւն.) բնակչութիւնը եւս
ենթարկուեց մասնակի կոտորածի³¹: Ուստի չի բացառուում, որ այս-

տեղից էլ որոշակի թուով բնակիչներ չէին կարող որեւէ կերպ հաշ-
ւառուել:

դ. Փախստականների 1914ի ցուցակներում բոլորովին չեն հանդի-
պում Կարաքիլիսէի եւ Դիադինի երեք գիւղեր (Բոթիգեղ³², Դիդամ,
Նաւրուզիգեղ), ուր մեր հաշուարկներով (հիմնուած վերը յիշուած աղ-
բիւրների վրայ) ապրել են աւելի քան 150 հայեր (տե՛ս՝ յաւելուածները):

դ. Վերջապէս, ինչպէս նախօրօք արդէն ասուել է, 1914ի Դեկտեմ-
բերին գաղթել չկարողացաւ Անթաբի (Դութաղի) կազայի հայերի մե-
ծագոյն մասը: Մեզ հասու տուեալների համաձայն, տեղի երկու տաս-
նեակ հայաբնակ գիւղերից (տե՛ս՝ յաւելուածները) Արեւելեան Հայաս-
տան էին անցել միայն եօթի բնակիչները, ընդ որում ամբողջութեամբ
(կամ գրեթէ ամբողջութեամբ) էին գաղթել Ասմարի (2-3 տուն), Դու-
թաղի (9 տուն) եւ Մօլլա-հասանի (10-12 տուն) հայերը, մեր հաշուար-
կով՝ ընդամէնը 170 մարդ: Միւս չորսից, որոնք են Դերըկը, Խարա-
խուն, Մըլանը եւ Քօշկը, ինչպէս ցոյց են տալիս լրացուցիչ փաստերը,
բնակչութիւնը դուրս էր եկել մասամբ: Այս վերջին բնակավայրերը՝
կազայի այլ հայաբնակ գիւղերի շարքում, հանդիպում են Մանազկեր-
տի առաջնորդական փոխանորդ Յովհաննէս քահանայ Տէր Աւետիս-
եանի 1915ի Մայիսի 28ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե-ին
ուղարկած Դութաղի, Բաղնոցի եւ հարեւան միջանի այլ շրջանների
կոտորածներին վերաբերող տեղեկագրում³³: Վերջինս որոշակի ցոյց է
տալիս, որ այստեղ՝ մինչեւ 1915ի ապրիլեան ջարդը, դեռ մնացել էին 15
տուն հայեր³⁴: Այս փաստը հնարաւորութիւն է ընձեռում պարզել
1914ի Դեկտեմբերի վերջին նշուած չորս գիւղերից հեռացած հայերի
մօտաւոր թիւը: Մեր հաշուարկներով, մինչեւ 1914ի դեկտեմբերեան
գաղթն այստեղ ապրել են շուրջ 50 տուն հայեր (մօտաւորապէս 350
անձ)³⁵, այսինքն՝ գաղթել էր 35ը: Ըստ այդմ, մօտաւոր տուեալներով,
Դերըկ, Խարախուն, Մըլան եւ Քօշկ գիւղերից 1914ի վերջին Արեւելեան
Հայաստանում ապաստանել էին դրանց շուրջ 250 բնակիչներ³⁶: Այս-
պիսով, Անթաբի (Դութաղի) կազայի քննարկուող եօթ գիւղերից Արե-
ւելեան Հայաստանում գրանցուած գաղթական հայերի թիւը կազմել է
մօտաւորապէս 420-450 մարդ: Ընդ որում, մեր հաշուարկներով³⁷, ամ-
բողջ գաւառի հայ բնակչութեան թիւը տատանում էր 2500-2800ի մի-
ջեւ, հետեւաբար տեղում մնացել էր աւելի քան 2000 մարդ:

Ամփոփենք. Ալաշկերտի, Կարաքիլիսէի, Դիադինի եւ Անթաբի
(Դութաղի) կազաներում ապրող հայերից 1914ի վերջին չէին գաղթել
(գոհուել կամ մնացել էին տեղում) շուրջ 3650ը: Հաշուի առնելով
քննարկուող չորս կազաներից Արեւելեան Հայաստանում գրանցուած
փախստականների ընդհանուր թիւը՝ 20120 անձ, ինչպէս նաեւ ունե-
ցած կորուստը՝ 2115 անձ, կը ստանանք, որ այստեղ մինչեւ գաղթը

բնակւում էր շուրջ 25900 հայ: Ինչ վերաբերում է Բայազետին, ապա տեղի գաղթականների թիւը կազմում էր շուրջ 3800 (3798) մարդ կամ 520 տուն³⁸: Նրանք դուրս էին եկել համանուն քաղաքից, ինչպէս նաեւ շրջակայ երեք հայաբնակ գիւղերից (Արծափ, Մայրամանա, Քորուն): Տարօրինակ կերպով, ցուցակում տեղ չի գտել հայաշատ Մօսուն (Մուսուն, տարբեր տուեալներով ունէր 570-770 բնակիչ) գիւղը³⁹: Բացի այդ, փաստեր կան, որ հայեր են ապրել նաեւ քաղաքի մօտակայ Թաւլա (Վերին Թաւլէն) գիւղում (ըստ Մարտիրոսեանի՝ 65 բնակիչ⁴⁰): Այս բացը պարզում է 30 Յունուար 1915ի միօրեայ վիճակագրութիւնը, համաձայն որի Բայազետի կազմի հայերի մի մասն ընդհանրապէս չէր գաղթել՝ մնալով հայրենիքում⁴¹: Փաստօրէն տեղի գաղթականների վերաբերեալ տուեալներն ամբողջական չեն: Այնպէս որ, Բայազետի հայերի հաւանական թիւը որոշելիս ստիպուած ենք դիմել Կարնոյ առաջնորդարանի եւ Մարտիրոսեանի տուեալների օգնութեանը: Ըստ առաջինի, Բայազետում հայերի թիւը եղել է 4886 անձ, իսկ երկրորդի՝ 4582 անձ⁴²: Ուստի առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակին այստեղ հայերի թիւը պէտք է կազմէր միջինը՝ 4700-4800 մարդ: Այս հարցում եւս օսմանեան 1912ի վիճակագրութիւնը տալիս է խիստ նուազեցուած տուեալներ՝ 2619 մարդ⁴³: Այսպիսով, մեր հաշուարկներով, 1914ի Բայազետի սանջակի հայերի իրական թիւը եղել է շուրջ 30700 մարդ, այսինքն աւելի քան 17000ով (129%ով) գերազանցել է «համընդհանուր մարդահամար» անունով յայտնի օսմանեան 1912ի վիճակագրութեան տուեալները:

Աւարտելով, նշենք հետեւեալը.-

ա. 1914-17ի արեւմտահայ գաղթականների վիճակագրական նիւթերն ուշագրաւ եւ միեւնոյն ժամանակ վստահելի աղբիւրներ են առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակին Արեւմտեան Հայաստանում մի ամբողջ շարք գաւառների հայ բնակչութեան իրական թուաքանակը ճշգրտու համար:

բ. Քննութիւնը ցոյց է տալիս, որ նոյն ժամանակաշրջանի հայկական վիճակագրական աղբիւրներում, որպէս կանոն, ճիշդ է արտացոլւած հայ բնակչութեան թիւը, հետեւաբար եւ դրանք հիմնականում հաւաստի են: Իհարկէ, դրանցում յաճախ կարելի է հանդիպել լուրջ անճշգրտութիւնների, որոնք հնարաւորութեան դէպքում կարելի է ուղղել վերը նշուած նիւթերի օգնութեամբ:

գ. Օսմանեան պաշտօնական վիճակագրութիւնը ոչ միայն անվստահելի է իր որոշակի քաղաքական միտումնաւորութեան պատճառով, այլեւ կազմուած է հակագիտական սկզբունքներով: Դա մասնաւորապէս ցայտուն կերպով ցոյց է տալիս Արեւմտեան Հայաստանի եւ

Կիրիկիայի ժողովրդագրական իրավիճակին եւ յատկապէս հայ բնակչութեանը վերաբերող տուեալները քննութիւնը:

Յաւելուած Ա. Էրզրումի վիլայէթի Բասէնի կազայի 15 գիւղերի հայ բնակչութեան հաւանական թիւը 1914ին՝ ճշդուած ըստ Երեւանի նահանգի տարածքում ապաստանած գաղթականների 30 Յունուարի 1915ի միօրեայ վիճակագրութեան տուեալների (համեմատութեամբ Կարնոյ առաջնորդարանի 1909ի տեղեկութիւնների)

Թիւ	Բնակավայր	1909		30 Յունուար 1915			ՀԹ (բն.)	
		տուն	բնկրն.	տուն	բնկրն.	կորուստ	մինչեւ գաղթը	
1	Ալի-ճէքրէկ (Ալիճագրակ, Արուճագրակ)	111	1075	172	1434	39	1443	1470
2	Գոմաճոր	160	1538	185	1525	62	1587	1600
3	Վէլիբարա (Դեիլբարա)	134	1206	122	1095	54	1149	1150
4	Էդէպար	103	978	128	1149	61	1210	1210
5	Թօղէ-վերան (Թողվերան)	54	498	61	489	46	535	535
6	Իշխու ⁴⁴	110	1037	120	917	46	963	1160
7	Խըղըր-էլիագ (Խղըր-էլիաս)	3	29	4	35	2	37	40
8	Խոսովերան (Խոսովերան)	27	243	25	200	17	217	260
9	Կոտապագ (Կողարագ)	35	312	60	480	27	507	510
10	Հարսնեքար	47	390	48	446	26	472	470
11	Ճառասուն (Ճասսն, Ջրասուն)	48	456	95	815	41	856	860
12	Եղան (Եղան)	142	1298	174	1308	78	1386	1570
13	Իւզվերան	64	608	89	777	69	846	1140
14	Տօրի ⁴⁵	57	540	71	680	20	700	700
15	Քէօփրիքէօյ (Վաղարշաւան)	90	810	122	1076	55	1131	1130
		1185	11018	1476	12426	643	13089	13800

**Յաւելուած Բ. Հրգրումի վիրայէթի Բայագէտի սանձակի կազաների
հայ բնակչութեան հաւանական թիւը 1914ին**

Ստորեւ ներկայացուող աղիւսակները կազմելիս հիմք ենք ընդունել Կարնոյ առաջնորդարանի (ԿԱ)⁴⁶ եւ Ն. Մարտիրոսեանի (ՆՄ)⁴⁷ արդէն յայտնի վիճակագրութիւնները՝ որպէս հաւանական թիւ վերցնելով միջին հաշուարկային ցուցանիշը: Հարկ է նշել, որ ինչպէս ցոյց է տալիս 1914ի դեկտեմբերեան հաշուառման եւ 1915ի Յունուարի 30ի միօրեայ վիճակագրութեան տուեալների համեմատումը, ի տարբերութիւն Բասէնի, Բայագէտի սանձակից դուրս եկած փախստականների մի զգալի մասն արդէն հեռացել էր այլեւայլ վայրեր, այդ թւում՝ ուսանների կողմից վերագրուած Բայագէտ եւ շրջակայ որոշ շրջաններ⁴⁸: Մեր հաշուարկներով, այդ թիւը կազմում էր 7148 մարդ, այսինքն 1914ի Դեկտեմբերին գրանցուած գաղթականների (23760 մարդ) 30%օր դուրս էր եկել Երեւանի նահանգից: Սրանով հանդերձ միօրեայ վիճակագրութիւնն ուշագրաւ տուեալներ է հաղորդում սանձակի մի ամբողջ շարք բնակավայրերի վերաբերեալ: Մեր կողմից առանձնացւած են նման 15 գիւղեր, որոնց տուեալներն օգնում են կատարելու աւելի ճշգրիտ միջին հաշուարկ: Ընդամին, երեքի մասին եղած վիճակագրական տեղեկութիւնները (Դուլթաղ, Ջաջուռ-Իրիցուզեղ, Վերին Քուփղրան) նոյնութեամբ ընդգրկել ենք համապատասխան աղիւսակներում, քանի որ դրանք գերազանցում են թէ՛ Կարնոյ առաջնորդարանի, եւ թէ՛ Մարտիրոսեանի տուեալները: Բացի այդ, որեւէ բնակավայրի վերաբերեալ մեր ընտրած սկզբնաղբիւրներից միայն մէկում վիճակագրական տուեալների առկայութեան դէպքում դրանք վերցրել ենք նոյնութեամբ: Հաշուի են առնուած նաեւ տուեալ ժամանակահատուածին առնչուող այլ սկզբնաղբիւրներ (նշուած են ծանօթագրութիւններում): Կազաները տալիս ենք ըստ 1911-12ի վարչական սահմանների: Օգտագործել ենք "Kopiya tureckoy karty Aziatskoy Turcii", քարտէզի (մասշտաբ՝ 1:210000) III-16: "Kara-kilisa", III-17: "Bayazet" եւ IV-16: "Melazgerd" պլանշէտները:

1. Բայագէտի կազայի հայ բնակչութեան հաւանական թիւը 1914ին

Թիւ	Բնակավայր	ԿԱ		ՆՄ		ՀԹ (բնկրն.)
		տուն	բնկրն.	տուն	բնկրն.	
1	Արծափ (Արըղափ)	120	1200	130	1360	1280-1300
2	Բայագէտ քաղաք		2500	250	2180	2300-2350
3	Թաւլա (-են Վերին)	տուեալներ չկան		8	65	65
4	Մայրամանա	7	37	15	97	80 ⁴⁹
5	Մուսուն (Մսուն)	70	774	60	570	670
6	Քօրսուն (Քորուն)	30	375	35	310	340
		227 ⁵⁰	4886	498	4582	4735-4805

2. Դիադինի կազմի հայ բնակչութեան հաւանական թիւը 1914ին

Թիւ	Բնակավայր	ԿԱ		ՆՄ		ՀԹ (բն.)
		տուն	բնկրն.	տուն	բնկրն.	
1	Բոթիգեղ (Ներքին)	տուեալներ չկան		7	45	45
2	Դաչիլայ (Քարովջուր, Ներքին)	15	140	7	50	100
3	Դիադին (Տատոնն), աւան	17	150	15	114	130
4	Թաւլա (-են)	5	35			35
5	Կարաբազար (Ղ-, Խ-, Ղարդա)	35	300	30	257	280
6	Գումրուպուճախ (Ղ-բուջախ)	37	322	45	400	360
7	Միրզաջան (-քենդ)	6	45	12	78	70 ⁶¹
8	Նաւրուզիգեղ	տուեալներ չկան		10	76	80
9	Զուջան(ց)	39	387	50	448	420
10	Սէյրօ (Ս-, Սէուրօ)	7	70	6	50	60
11	Վանքիգեղ (Ս. Յովհաննէս, Ուչքիլիսէ, Բագաւան)		319	8080	280	300
		161 ⁶²	1768	212	1798	1880

3. Կարաքիլիսայի կազմի հայ բնակչութեան հաւանական թիւը 1914ին

Թիւ	Բնակավայր	ԿԱ		ՆՄ		ՀԹ (բն.)
		կուն	բնկրն.	տուն	բնկրն.	
1	Աղադաւա ⁶³	տուեալներ չկան				20
2	Աչխալի (-կուլա)	21	196	25	185	190-200
3	Բագրիսանա (Բեդիրիսանա գեղ)	տուեալներ չկան				20
4	Դանազիրան	տուեալներ չկան				20
5	Դիդաժ	տուեալներ չկան		4	30	30
6	Երանոս	18	135	15	112	120
7	Զիրօ (Զիրաւ)	15	249	25	197	225
8	Խաչու	տուեալներ չկան				20
9	Խրդըր (Հազր)	11	116	8	52	80-85
10	Կարաքիլիսէ (Ղ-, գ-բաղաք)	320	2250	400	3100	2800 ⁶⁴
11	Հաջի-Սաֆար	տուեալներ չկան		3	20	20
12	Ղազարիգեղ	տուեալներ չկան				20
13	Ղազուգեղ (Ղազի)	29	520	50	422	490-500
14	Ղարասու (Խ-, Խարճս)			17	127	130
15	Մանակար	91	923	80	786	865
16	Ծօնջաու (Առաւիտոց գիւղ)	120	1320	85	885	1100-1115
17	Նորգեղ (Մազրա)	44	574	45	384	505-510
18	Չամրու	8	53	3	22	40
19	Չափու-Իրիցուգեղ	73	712	65	490	790 ⁶⁵
20	Քուփդրան (Վերին)	տուեալներ չկան		5	36	50-55
		748	7048	840	6828	7540-7580

4. Այազկերտի կազմի հայ բնակչութեան հաւանական թիւը 1914ին

Թիւ	Բնակավայր	ԿԱ		ՆՄ		ՀԹ (քն.)
		տուն	բնկրն.	տուն	բնկրն.	
1	Ամատ (Համադ)	204	1581	247	2099	18400
2	Գարբսան	8	65	տուեալներ չկան		65
3	Երնիթափա (-թէփէ, Բլուր)	115	740	205	1790	1425 ⁶⁶
4	Զէտկան (Զեթ, Զէյրէկան, Զիթկա)	63	515	78	664	1000 ⁶⁷
5	Թոփրադ-կալէ (Այազկերտ, Վաղարշակերտ), գ-քաղաք	160	1400	145	1088	1245-1250
6	Խաչըւ (Խաչըւ)	104	824	134	1142	1000
7	Խաստուր (Մնձոր)	146	1322	214	1819	1630
8	Խօշեան	40	354	32	240	320
9	Ղայարէկ (Խ-)		475	64	488	480
10	Մօլլա-սուլէյման	161	1252	178	1700	1500
11	Շամիան	տուեալներ չկան				20 ⁶⁸
12	Զլկանի (-կահնի)	84	650	94	799	725
13	Երիցու-գիւղ, (Յրանկ-Իրիցու-գեղ)	76	768	98	748	760
		1161 ⁶⁹	9946	1489	12577	12010-12015

5. Անթարի (Դուժաղի) կազմի հայ բնակչութեան հաւանական թիւը 1914ին

Թիւ	Բնակավայր	1909 (տուն) ⁶⁹	ԿԱ	ՆՄ		ՀԹ (քնկրն.)
				տուն	բնկրն.	
1	Ամար (Կամէր)	3	24	2	13	20
2	Պաղնոս (Բաղնոց, Պատնոց)	50	400	150	984	1000-1050 ⁶¹
3	Բաղուն (Բողո, -ան, Պոտ-)	11	88	10	65	75
4	Գրագոմ (Կ-)	տուեալներ չկան		33	280	465 ⁶²
5	Դէրըկ (-իկ)	2	16	8	58	60
6	Դուժաղ	6	48	7	48	60-65 ⁶³
7	Զիարէթ (-աթ)	տուեալներ չկան				15 ⁶⁴
8	Խանըկ (-իկ)	1		1	5	5
9	Խարախու (Ղարաղու)	15	120	12	65	100
10	Խարղալըղ (Ղարղալըղ)	5	40	4	30	35
11	Խորբասոր	19	152	13	76	110
12	Կոլա	տուեալներ չկան		1	6	5-10
13	Մըլան (Մըլո)	12	96	11	82	85
14	Մօլլա-հասան (Մալա-)	8		15	84	80-85
15	Մուսիկ	5	40	2	17	30
16	Նաղարշէյիս (-շէիս)	24	200	տուեալներ չկան		200
17	Շամէ (Շամսի)	10	80	5	35	60
18	Ջամալիէրդի (Ջարալ-)	5	40	5	34	35-40
19	Քօշկ (-ք)	13	107	2	17	100 ⁶⁵
20	Օզոյի (Հասուն)	տուեալներ չկան		6	39	40
		189	1451	287	1938	2580-2665

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆ

բն.	-	բնակիչ
բնկրն.-	-	բնակարան
գ-քաղաք-	-	գիւղաքաղաք
ԿԱ	-	Կարնոյ առաջնորդարան
կոր.	-	կորուստ
ՀԹ.	-	հաւանական թիւ
ՆՄ	-	Ն. Մարտիրոսեան
տ.	-	տուն
տմմգ.	-	տան մեծութեան միջին գործակիցը

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Խուսափելու համար աւերորդ սխալներից, այստեղ եւ յետագայում եւս ամսաթուերը տուել ենք հին տոմարով:
- ² Հայաստանի Հանրապետութեան Պետական Պատմական Կենտրոնական Արխիւ (այսուհետեւ՝ ՀՀ ՊՊԿԱ), Փոնդ 28, ցուցակ 1, գործ թիւ 128, թերթ 73-75: Ա-Դօ, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թուականներին, Երեւան, 1917, էջ 107:
- ³ «Տեղեկագիր Հայկական կենտրոնական կոմիտէի գաղթական-փախստականների մասին», Հորիզոն, Թիֆլիս, թիւ 61, 1915, Յաւելուած, էջ 1:
- ⁴ "Ervanskaya statisticheskaya komissiya. Odnodnevnyaya perepis bezhencev iz Turcii, Persii i iz mest, pogranichnikh s Turciej (armyan, aysorov, grekov i pr.) 1914-15g." [Երեւանի վիճակագրութեան յանձնաժողով. միօրեայ արձանագրութիւններ 1914-15 տտ. Թուրքիայից, Պարսկաստանից եւ Թուրքիայի սահմանամերձ տեղանքներից փախստականների (հայեր, ասորիներ, յոյներ, եւլն.) մասին], Երեւան, 1915: ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 1, գ. թիւ 132, թթ. 30-35: ՀՀ Պատմութեան Պետական Թանաքարան, նոր պատմութեան Փոնդ, Ա-Դոյի արխիւ, գ. թիւ 839/176, թթ. 1-5:
- ⁵ Kemal H. Karpat, *Ottoman Population. 1830-1914: Demographic and Social Characteristics* (Madison, Wisconsin, 1985); Justin McCarthy, *Muslims and Minorities: The Population of Ottoman Anatolia and the End of the Empire* (New York and London, New York University Press, 1983):
- ⁶ Հորիզոն, թիւ 276, 1914:
- ⁷ Տե՛ս՝ ծանօթ 34:
- ⁸ Անուանապէս յիշուած են 24ը: Հանդիպում են նաեւ «այլ գիւղերից» դուրս եկած 111 բնակիչներ (17 տուն. տե՛ս՝ Odnodnevnyaya perepis, էջ 44-45):
- ⁹ Նոյն:
- ¹⁰ Նոյն:
- ¹¹ Աղ. Շարաֆեան, «Թիւրքահայ փախստականները եւ նրանց վիճակը», Հորիզոն, թիւ 273, 1914, էջ 2: «Բասէն գաւառի 11 հայ գիւղերի ազգաբնակչութիւնը», Հորիզոն, թիւ 276, 1914, էջ 3: ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 74:
- ¹² Ըստ միօրեայ վիճակագրութեան տուեալների՝ կորստի հաշուարկով, բասէնցի հայերի տմմգ. ն կազմում էր 8.8 (հաշուարկը մերն է - Գ. Բ.):
- ¹³ Նոյն, թ. 11:
- ¹⁴ Odnodnevnyaya perepis, էջ 44-45:
- ¹⁵ Հաշուարկել ենք ըստ Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'empire ottoman à la veille du génocide* (Paris, Les éditions d'art et d'histoire, 1992), էջ 449-451:
- ¹⁶ Մանրամասն տե՛ս՝ Karpat, էջ 170-171:

- ¹⁷ R. Bekgulyanc (Severyanin), *Po Tureckoy Armenii (Թուրքական Հայաստանի միջով)*, Դոնի Ռոստով, 1914, էջ 68:
- ¹⁸ Տե՛ս՝ ծանօթ 14:
- ¹⁹ Ա-Դօ, *Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիրայիթները*, Երեւան, տպարան «Կուլտուրա», 1912, էջ 179-180: Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, էջ 449-51:
- ²⁰ Այլ գիւղերն են՝ Ալիճազարակ, Գոմաձոր, Դելլուբաբ, Էգէպատ, Թողվերան, Խղըր-էլիաս, Խոսրովերան, Կոռաբազ, Հարսնեքար, Ճոասոն, Եաղան, Իւզվերան, Տօտի, Քէօփրիքէօյ: Տե՛ս՝ նաեւ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 74:
- ²¹ «Տեղեկագիր», էջ 1-2:
- ²² Karpat, էջ 170-171:
- ²³ Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, էջ 59, 458-460: Ի դէպ, գոյութիւն ունեցող մէկ այլ ցուցակի համաձայն, Բայազէտի սանջակի հայերի թիւը կազմում էր 16466 մարդ (տե՛ս՝ Bekgulyanc, էջ 68): Սակայն վերջինս յիշատէք չի կարող համարուել, արդէն իսկ հասկանալի պատճառներով եւ, ամենայն հաւանականութեամբ, նախնական վիճակագրութեան տարբերակ է եղել: Ընդ որում, կարծում ենք, որ հաշուառումից դուրս են թողնուած կաթողիկ հայերը, որոնք մեծ թիւ էին կազմում մանաւանդ Ալաշկերտում: Այնուամենայնիւ, անգամ սա, 3054 մարդով (22.8%ով) գերազանցում է օսմանեան տուեանները:
- ²⁴ *Վան-Տոսպ*, թիւ 8, 1917, էջ 4-5:
- ²⁵ «Տեղեկագիր», էջ 1-2:
- ²⁶ Ն. Մարտիրոսեանը գիւղի հայերի թիւը նշում է 448, իսկ Կարնոյ առաջնորդարանի վիճակագրութեան մէջ այն 387 է: Վերցրել ենք միջին հաշուարկը՝ մօտ 420 մարդ եւ, հաշուի առնելով որ գիւղից, 30 Յունուար 1915ի միօրեայ վիճակագրութեամբ, Երեւանի նահանգում գրանցուել են ընդամէնը 41 հայեր (6 տուն, զոհերի թիւը՝ 2 անձ), ստացել վերոյիշեալ թիւը:
- ²⁷ Odnodnevnyaya perepis, էջ 48:
- ²⁸ Նոյն:
- ²⁹ Ալեքսանդր Շիրվանզադէ, «Պատերազմի վալըում», *Երկերի ժողովածու*, հատոր իններորդ, Երեւան, «Հայպետհրատ», 1961, էջ 166: Ի դէպ, հեղինակը նշում է, որ Ջետիկանի «խուրքանչիւր ընտանիք» ունէր «20ից մինչեւ 30 հոգի»: Տե՛ս նաեւ՝ Ա-Դօ, *Մեծ դէպքերը*, էջ 119:
- ³⁰ Ըստ Ա-Դոյի՝ 154 տուն հայ (տե՛ս՝ *Մեծ դէպքերը*):
- ³¹ Odnodnevnyaya perepis, էջ 46-47:
- ³² Բոթիգեղը հանդիպում է 1915ի Յունուարի 30ի միօրեայ վիճակագրութեան ցուցակներում: Գրանցուել էր տեղի 22 բն. (3 տուն. տե՛ս՝ նոյն):
- ³³ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 54, թթ. 18-19: Հմմտ.՝ "Genocid armyan v Osmanskoy imperii" (հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում), sbornik dokumentov i materialov (փաստաթղթերի եւ նիւթերի եւ ժողովածու), pod red. M. G. Nersisyan, Երեւան, 1983, էջ 284: *Հորիզոն*, թիւ 153, 1915, էջ 1:
- ³⁴ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 54, թթ. 18-19:
- ³⁵ Օգտուել ենք Կարնոյ առաջնորդարանի արդէն յայտնի, ինչպէս նաեւ՝ Մարտիրոսեանի Անթաբի հայ բնակչութեան վիճակագրութիւններից (տե՛ս՝ Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, էջ 460: *Վան-Տոսպ*, 1916, թիւ 15, էջ 9): Առանձին դէպքերում օգտագործել ենք նաեւ Ա-Դոյի տուեանները (տե՛ս՝ *Վանի*, էջ 216-217):
- ³⁶ Նկատի ենք ունեցել Անթաբի հայերի տմմգ.ն՝ 7.1 (Դուլթաղ գիւղի տուեաններով ըստ միօրեայ վիճակագրութեան):

- ³⁷ Ըստ բազմիցս արդէն յիշատակուած հայկական վիճակագրութիւնների, գաւառի Հայ բնակչութեան թիւն էր 1563 (սխալ հաշուարկով՝ 1624, տե՛ս՝ Կարնոյ առաջնորդարան. Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, էջ 460) եւ 1938 (Մարտիրոսեան, նոյն)։ Հաշուարկել ենք նաեւ Գրազոմ գիւղի բնակչութիւնը, որը թէ՛ եւ աւելի յաճախ հանդիպում է հարեւան Վանի վիրայիթի Արճէշի կազայում, բայց վարչականօրէն 1912-14ին Անթաբի կազմում էր։ Տե՛ս՝ "Kopiya tureckoy karti Aziatskoy Turcii, izdannoy v masshtabe 1:200000 v 1330 godu gidriz, t. e. v 1911-12 godax" [Tiflis], 1915-17, m. 1:210000, IV-16 "Melazgerd" (Ասիական Թուրքիայի քարտէզի պատճէն, 1:200000 մասշտաբի հրատարակութեամբ, հիջրի 1330 թ/1911-12) պլանշէտը։ Ընդ որում, հարկ է նկատել որ միայն Դուխազ գիւղի Հայ փախստականների թիւը միօրեայ վիճակագրութեան տուեալներով արդէն իսկ 1/3ով գերազանցում էր թէ՛ Կարնոյ առաջնորդարանի, եւ թէ՛ Մարտիրոսեանի թուերը (տե՛ս՝ յաւերածների բաժին)։ Եւս մի դիտողութիւն. առաջնորդարանի ցուցակում նշուող տների ամփոփիչ քանակը նոյն է Ա-Դոյի տուեալների հետ (երկու դէպքում էլ՝ 203)։
- ³⁸ «Տեղեկագիր», էջ 1-2։
- ³⁹ Ի դէպ, գիւղը հանդիպում է 30 Յունուար 1915ի միօրեայ վիճակագրութեան ցուցակներում։
- ⁴⁰ Վան-Տոսպ, թիւ 6, 1917, էջ 4։
- ⁴¹ Odnodnevnyaya perepis, էջ 46-47։
- ⁴² Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, էջ 458։ Վան-Տոսպ, թիւ 6, 1917, էջ 4։
- ⁴³ Karpat, էջ 170-171։
- ⁴⁴ Թիւ 6, 8, 12-13 գիւղերի Հայ բնակչութեան հաւանական թիւն որոշելիս, հաշուարկի մէջ ենք մտցրել նաեւ 30 Յունուար 1915ի միօրեայ վիճակագրութիւնից նշուած բնակավայրերի դուրս մնացած շուրջ 80 տները՝ նկատի ունենալով Բասէնի հայերի տմմգ.՝ 8.8։
- ⁴⁵ Les Arméniens հեղինակները սխալմամբ այն նոյնացրել են կազայի Թայխոջա (Տարխոջա) գիւղի հետ։ Ճշգրտել ենք ըստ Ա-Դոյի Վանի, գրքի տների թուով։
- ⁴⁶ Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, էջ 458-460։
- ⁴⁷ Վան-Տոսպ, թիւ 14, 1916, էջ 9. Թիւ 6, 1917, էջ 4-5։
- ⁴⁸ Odnodnevnyaya perepis, էջ 46-47։
- ⁴⁹ Հաւանական թիւն՝ ըստ Մարտիրոսեանի տուեալների եւ գիւղի 1915ի Դեկտեմբերի 15ին Երեւանի նահանգի Նոր-Բայազէտի գաւառի նորածնում կատարուած վիճակագրութեան (գրանցուել էր 64 բնակիչ։ Տե՛ս՝ ՀՀ ՊՊԿԱ, Ֆ. 28, ց. 1, գ. 408, թ. 1)։
- ⁵⁰ Առանց Բայազէտի։
- ⁵¹ Միջին հաշուարկն՝ ըստ Մարտիրոսեանի եւ միօրեայ վիճակագրութեան տուեալների։
- ⁵² Առանց Վանքիգեղի։
- ⁵³ Թիւ 1, 3, 4, 8 եւ 12 գիւղերն ըստ 1914ի Դեկտեմբերի վերջին Արեւելեան Հայաստանում ազատանած փախստականների ցուցակների (տե՛ս՝ «Տեղեկագիր», էջ 1-2)։ Նշուած բնակավայրերում հաշուել ենք մօտ 100 անձ։
- ⁵⁴ Թիւ 10, 13, 15-17 բնակավայրերի հաւանական թիւն որոշելիս նկատի ենք առել աղիւսակի առաւելագոյն ցուցանիշը եւ 1915ի Յունուար 30ի միօրեայ վիճակագրութեան տուեալները (կորստի հաշուարկով)։ Ըստ այդմ, Կարաքլիսից գրանցուած 342 տունն ունէր 2392 բնակիչ + կորուստը՝ 96 բն. = 2478 բնմգ., Ղազուգեղից՝ 51 տ., 432 բն. + կոր.՝ 23 բն. = 455 բնմգ., Մանկասարից՝ 80 տ., 799 բն. + կոր.՝ 28 բն.

= 807 բնագ., Եօնջարուից՝ 109 տ., 870 բն. + կոր.՝ 39 բն. = 909 բնագ., Նորգեղից՝ 62 տ., 404 բն. + կոր.՝ 32 բն. = 438 բնագ.: Տուեալներն՝ ըստ Odnodnevnyaya perepis, էջ 48-49:

⁵⁵ Թիւ 19, 20 գիւղերի համար հայերի հաւանական թիւը նոյնութեամբ ընդունել ենք 30 Յունուար 1915ի միօրեայ վիճակագրութեան տուեալներն, որոնց համաձայն Զաղու-Իրիցուգեղից գրանցուած 92 տունն ունէր 787 բն. + կոր.՝ 23 բն. = 790 բնագ., իսկ Քուփղարանի 4 տունը՝ 51 բն. + կոր.՝ 2 բն. = 53 բնագ. (տե՛ս՝ նոյն):

⁵⁶ Թիւ 3, 7, 8 գիւղերի հաւանական թիւն որոշելիս՝ ելակէտային ենք ընդունել աղիւսակում հանդիպող առաւելագոյն ցուցանիշը եւ 30 Յունուար 1915ի միօրեայ վիճակագրութեան տուեալները: Ըստ այդմ, Երեւանի նահանգում գրանցուել էին Երնիթափայից՝ 132 տ., 1002 բն. + կոր.՝ 154 բն. = 1056 բնագ., Խաստուրից՝ 168 տ., 1392 բն. + կոր.՝ 63 բն. = 1455 բնագ., Խոշեանից՝ 39 տ., 267 բն. + կոր.՝ 20 բն. = 277 բնագ. (տե՛ս՝ Odnodnevnyaya perepis, էջ 46-47):

⁵⁷ Մեր հաշուարկով: Տե՛ս նաեւ՝ տեքստը:

⁵⁸ Տե՛ս՝ ծանօթ 53:

⁵⁹ Առանց Ղայարէկի:

⁶⁰ Ա-Դոյի տուեալները:

⁶¹ Ըստ Յովհաննէս Տէր-Աւետիսեանի 28 Մայիս 1915ի տեղեկագրի՝ 150 տուն հայ բնակիչ (ՀՀ ՊՊԿԱ, Փ. 57, ց. 5., գ. 54, թ. 18): Հաւանական թիւն որոշել ենք ըստ տների թուի եւ Անթարի (Դութարի) հայերի տմագ-ի՝ 7.1 (տե՛ս՝ տեքստի թիւ 34 ծանօթագրութիւնը):

⁶² Ա-Դոյի մօտ՝ Վանի վիլայէթի Արճէշի կազայի կազմում՝ 411 հայ բնակչով (50 տուն: Տե՛ս՝ Մեծ դէպքերը, էջ 16): Սակայն նոյն հեղինակի արխիւում պահպանուել է Արճէշի հայ բնակչութեան մէկ այլ վիճակագրութիւն, որտեղից էլ վերցրել ենք վերոյիշեալ թիւը (տե՛ս՝ ՀՊՊԹ, նոր պատմութեան Փոնդ, Ա-Դոյի արխիւ, թիւ 839/143-11, գ. 6):

⁶³ Հաւանական թիւն՝ ըստ 30 Յունուար 1915ի միօրեայ վիճակագրութեան (տե՛ս՝ Odnodnevnyaya perepis, էջ 46-47):

⁶⁴ Ըստ Տէր-Աւետիսեանի տեղեկագրի, որով գիւղում ապրում էին 2 տուն հայեր (x տմագ՝ 7.1):

⁶⁵ Այն փաստը, որ գիւղից գաղթականներ էին գրանցուել 1914ի Դեկտեմբերին, բայց 1915ի գարնանն այստեղ դեռ մնացել էին 2 տուն հայեր (ըստ Տէր-Աւետիսեանի նոյն տեղեկագրի), պարզում է, որ Քօշկում նրանց թիւն աւելին էր քան ցոյց է տալիս Մարտիրոսեանը: Հաւանական թիւը ճշդել ենք՝ ելակէտային համարելով Ա-Դոյի տուեալները: Ի դէպ, գիւղում ըստ Սարգիս Հայկունու, 1890ականներին հայերի թիւը 20 տուն էր (տե՛ս՝ Ս. Հայկունի, Բագրեւանդ ջրաբաշխ գաւառ, մասն Ա., Ս. էջմիածին, 1894, էջ 296):

THE CORRECTION OF THE NUMBER OF THE ARMENIAN INHABITANTS OF
SOME CAZAS OF ERZURUM ACCORDING TO THE STATISTICAL LISTS BASED
ON THE CENSUS CONDUCTED IN 1914-15 ON THE WESTERN ARMENIANS
WHO TOOK REFUGE IN EASTERN ARMENIA
(Summary)

GEGHAM BADALIAN

The author tackles an issue which is still hotly debated among scholars, namely determining the population of Western Armenia. As a case study, the Basen caza and the Bayazit sanjak (including the cazas Alashkert, Antab/Dutagh, Bayazit, Diadin and Garakilise) of the Vilayet of Erzurum were chosen. Most of the Armenian population of these areas were able to take refuge in Eastern Armenia in November-December 1914. Interestingly, these refugees were immediately counted by the Russian authorities as well as by individuals. Later on these statistics were published. From the 30 Armenian-inhabited villages of Basen region, 15,500 Armenians who had taken refuge in Eastern Armenia were counted (excluding those who perished on the road). On the other hand the official 1912 (Hijra 1330) "general census" (**nüfus-i umumî**) registers a little more than 10,000 Armenians for the whole caza.

The author compares the number registered in the one-day census conducted in the state of Yerevan on January 30, 1915 (which counted 26,000 or 3245 families) to the census conducted by the prelaycy of Erzurum in 1909 (which had counted 21,000). He concludes that at the dawn of the First World War, the number of Armenians in the whole caza of Bayazit was around 30,700. This figure is 129% more than what the Ottoman census had registered, namely 13,400.

The article proves as well that the Armenian census of the time is more reliable and correct than the Ottoman.